Մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Նիզամու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրա (8 դասաժամ), ռուսաց լեզու (5 դասաժամ), կերպարվեստ (2 դասաժամ), երաժշտություն (2 դասաժամ), տեխնոլոգիա (2 դասաժամ), դասվար (19 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցակացվում է երկու փուլով ՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնկցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև 5) ,

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել այն:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 28– ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **դեկտեմբերի 1 - ին՝ ժամը 14:00-ին ,** ՀՀ Արարատի մարզի Նիզամու միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Նիզամի, Ա.Եղիազարյան 37:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)40-43-13 հեռախոսահամարով: